Արձանագրություն 3

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-23/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 08.06.2023թ. ժամը 14:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Գ. Վարդանյան – ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետ,

Անդամներ

Ա. Այվազյան – ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության փորձագետ,

Տ. Գալոյան - ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության գլխավոր մասնագետ,

Ա. Հովսեփյան - ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության գլխավոր մասնագետ,

Վ. Բանդուրյան – ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության ավագ մասնագետ,

Գնումները համակարգող

Վ. Սիմոնյան - ՖՆ կառավարչական հարցերի կազմակերպման վարչության մասնագետ:

1. **<u>Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին</u>**

1.1 «ԱԼՊԱՆՈ» ՍՊԸ-ի և «ՋԻ ԷՍ ԷՅՋ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը ներկայացված են սահմանված պահանջներին համապատասխան:

1.2 Մյուս մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

1. «Բի Լայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված լիազորագիրը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:
2. «Իվան Հայրապետյան» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտի հավելված 1.1-ում մասնակցի անվանումը սխալ է լրացված:Բացի այդ, ապրանքի նկարագրով ներկայացված ապրանքատեսակը չի համապատասխանում հրավերով նախատեսված ապրանքանիշներից և ոչ մեկին:

3. «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել հրավերով սահմանված հավելված 1.1-ը: Բացի այդ, «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ի կողմից հավելված 1-ով ներկայացված հղումը չի հանդիսանում «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ի իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվություն պարունակող կայքէջի հղումը:
4. «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1.1-ի ապրանքի նկարագրում հստակեցված չեն որպես համարժեք հանդիսացող ապրանքատեսակները:
5. «Ստեպ Լոջիկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1.1-ում՝ ապրանքի նկարագրում բացակայում է՝ նշում առ այն, որ ներկայացվող ապրանքի սնունցման լարը պետք է լինի եվրոպական վարդակով, իսկ սնուցումը ՝ 220վ:

1.3 Հանձնաձողովը ընդունեց ի գիտություն, որ «Էյչ Գրուպ » ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում «արժեք» ու «ԱԱՀ» սյունակներում գումարները նշված են միայն թվերով, բայց քանի որ «ընդհանուր գինը» նշված է նաև տառերով, հայտը այդ մասով ենթակա չէ մերժման:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

2. Հանձնաժողովի կայացրած որոշումները

Հանձնաժողովը որոշեց

1. Կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը 1 աշխատանքային օրով և ծանուցել «Բի Լայն» ՍՊԸ-ին, «Իվան Հայրապետյան» ԱՁ-ին, «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ին, և «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին, «Ստեպ Լոջիկ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով հրավերով սահմանված ժամկետում շտկել հայտում առկա անհամապատասխանությունները,

2. «ԱԼՊԱՆՈ» ՍՊԸ-ի և «ՋԻ ԷՍ ԷՅՋ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

«ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-23/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել սույն թվականի հունիսի 12-ին ժամը 12:00-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝	_____	Գ. Վարդանյան
Հանձնաժողովի անդամներ՝	_____	Ա. Այվազյան
	_____	Տ. Գալոյան
	_____	Ա. Հովսեփյան
	_____	Վ. Բանդուրյան
Գնումները համակարգող՝	_____	Վ. Սիմոնյան